

„Droschak“

ORGANE
de la Fédération
Russe, Arménienne.

ԴՐՕՇԱԿ

Adresse:

REDACTION DU JOURNAL

„Droschak“

GENEVE (Suisse)

„ՆՈՑ ՅԵՂԱՓՈՒՆԿԱՆ ԳԱՂՆԱԿՑՈՒԹԵԱՆ“ ՕՐԳԱՆ

Խ Ի Կ Օ Լ - Գ Ո Ւ Մ Ա Ն

Մի դադար ևս — (գեղի հայրենան սրբառաձարը) Մի շիրիմ ևս — (տղտղ գրգռական ըրմարուխ արցունքներով ցողած, հարիւր հազարների գուրգուրանքով շրջապատած) Կիկոյ, Գուժան... Հին օրերի նիրական անուններն է, այն անդրանիկ պիտադից, որ գնացել էր բռնու-

գրիւմ էր վերստին հրացանը, շահում էր կորացած իրանը, որտեղի սուր ու թափանցող աչքերով հայրւմ էր հորիզոնը և նեւում էր յարանքի մեջ պաշտասիրեան վնասանութեամբ ու սրիւթեամբ:

Վ ի ա կ ա ն ու թ իւ շ ը, անասան կամքը, որ շուժեքի պաղ ու անյողողիչ կատարումը, կուսակցական պողպատեայ դիպիպլինը — անհրաժեշտ գծեր են ամեն մի կուռում, ևս առուել հայոց դատան յեղափոխական պայքարի մէջ: Այդ գծերի անձնատուրն էր զարարացի հերոսը և նրանց համար պատրաստ էր նա ամեն վախ-

Գուժան



Յ Ա Ն Ա Մ Օ Ր Ի Ա Ր Շ Ա Ի Ա Մ Մ Ա Ի Յ

կալութեան և սարկութեան շարունակների մէջ ճանապարհ հարթելու գաղտ ընթաց սերունդների համար: Երկար է իր անցած ճանապարհն ևս — անհունօրէն, դատարներ երկար: Թաւրիզ, Դերիկ, Բողազ-Ջեասան, Խանասոր, Բարու, նորէն Վասպուրական, Երևան, նորէն Թաւրիզ — այդ ճանապարհի հանգրուաններն են, այդ հոյակապ կեանքի սրտառուչ դրամադերը: Հերոսը կանգ էր առնում ամեն մի ծանր ու աննշույթ շիգից յետոյ, ներսում էր «որինական», կուլտուրական աշխատանքի, յորնում էր, ապագանում և առաջին առիթով իսկ

կեան իր կեանքը զհարեւելու: Բարոյական ամենաբարձր սկզբունքներն իւրացրած և կուսակցութեան անաղարտ գրողակի նախանձախնդիր՝ նա մարմնացած վեհանձնութիւն էր գեղի թոյլն ու անպաշտպանը, — անգամ թշնամի բանակի մէջ — բայց և անհաշտ ու անընկճելի էր, երբ պետք էր պատժել յանցաւորին, լինէր դա մի թշնամի կամ ջեղակից, մի գուռաձան, մի մասնիչ, կամ թէկուզ կուսակցական գիտելիքի դէմ մեղանշող մի անհաստ Խանասորի սրշուանքի միջոցին նրա ձայնն էր, որ հնչում էր կարուկ ու զորուար:

— «Յգէ՛րք շան, կանանց ու երեխաներին մի՛ ձեռք տաք, բայց աղամարգկանց անխայ մորթոսեցէ՛ք»:

*

Հայ-թաթարական կռիւներէ մէկ ենք: Քրդերէ սարսափ—Գուճուճը այժմ թուրքերի սարսափն էր... ԴՊշ-նակցութեան՝ ընգհանուր հրամանատարի պաշտօնում, Երևանեան նահանգի մէջ քաղաքում և շրջակայքում հայերը յաղթող են: Անորդ հակառակորդը Համար-ձախելով փորձել իր ուժը բացարձակ կու՛ի մէջ, սխու՛մ է գաղանի սերրորների մի անվերջ շարան: Ամեն օր այդ կամ այն այրու կամ փողոցի մէջ անհասանում է այս կամ այն հայրը Ենչպէ՛ն հակազդել: Դիկօյի համար վարանում չկայ: Գէտք է ամեն գնով վերջ տալ այդ ճարտիող անհասական սպանութիւններին: Եւ նա հրամայում է. իւրաքանչիւր անհասացած հայի փոխարեն՝ անհասացնել 3 — 4 թաթար: Ազգակի հրամանները աւելի ճշտու ու երկիւղանութեամբ չէին կատարոււմ, քան Դիկօյինը: Դաշնակցութեան սերրորիսաները սխու՛րցին մեծօրով ի կատար անել իրենց ազգական առաջնորդի հրամանը, ղա՛ն ընդ ախնը՞՞ — անխրտ, բայց փրկարար—գործեց ա՛հաւոր հետևողականութեամբ և կարճ ժամանակում, Դիկօյի այդ գաժան stratagème-ի շնորհիւ, թշնամին խնայահեց, սպանութիւնների համաճարակը վերացու, հայ ժողովուրդը շունչ առաւ:

*

Անողորմ դէպի վասերը — նաև սեփական շարքերի մէջ: Ղայն թաթարական ընգհարուճների շրջանում ենք: Մի օր—տիրային թէ այլ ենգրի առիթով—զինուորներից մինը հետանգրում է ու սպանում իր ընկերոջ: Երկուսն էլ Դաշնակցութեան զինուորներ... Հրամանատարը չի կարող հանդուրժել մի այդպիսի սրբոր, որ գուաճանութեան համահաւասար էր: Ղա հրամայում է հրացանի բռնել յանցաւորին: Աջ մի ազգանք չի օգնում այլ ևս: Դաշնակցական կարգապահութիւնն ու բարոյափանութիւնը ունակհարել են ամենաիրաւ կերպով Յանցագործը պէտք է բաւէ: Եւ մի օր նա կուպոււմ է Եառի բնին ու գնդակահարում՝ սարող բանակի ներկայութեամբ... յօրինակ այլոց:

*

Կազմակերպութեան պրեստիճը—ամեն բանից վեր: Դիկօյը Քիֆիխ Ե 1906-ն է. թաթարական խրատուները գազարել են արգեն: Անգորարացու՛ն էլ, էլ չկան խոյական ձիարշուները, ոչ էլ ղստորերկրայն՝ գուազարական ժեսները: Քաջի իրանը վերստին կորացել է, քաղաքները գանգաղել, բայց սիրուն աչքերը շարունակում են կայանակեր ղնանելիգեննա՞՞ աշխատաւոր է այժմ, մասնակցում է վարիչ մարմինների գործունեութեան, առլիս է միշտ իր իմաստալի խորհուրդները, խօսում է սակաւ, միշտ անգին, միշտ խելացի, խօսում է օրանելի սրամաքանութեամբ, հաղորդում է

փայլ ու շքութիւն ընկերական հաւաքութեանը: Եւ մի օր, պատահմամբ, ընկերներից մինը գալիս է ու յայտնում, որ այս ինչ մարմինը ժահաւ սպանակիրով խոշոր գուճար է պահանջում մի անհատից, որ Դաշնակցութեան՝ օժանդակող է և նրա պաշտպանութեան ենթակայ: Ապառնացողը ի խմբի էր, որ հրապարակ էր երկել այդ պատմական օրերին ղգապարծեղու՞: Դաշնակցութեան սանգած արամագրութիւնները: Գաուի խեղիք էր Դաշնակցութեան համար և միւս կողմից էլ՝ հարկ էր, վերջապէս, սահման գնել այդ սխտեմտակի ղգապարծումներին՞, որնք գնում էին սուուցանելու մի անպուա ու գերազանցապէս պարզիս գոյութիւն: Դիկօյ անմիջապէս սար է, ղստի ինձ այնտեղ, ուր նշանակած է ժամագրութիւն սպանանցող գրամաշրթները հեռա՞: Եւ քիչ յետոյ Դուճանի սպանակիրն է հնչում: Ա...-ի գրասենեակի մէջ, ուր յիշատակած ղմարմինը՞ ղրկել էր իր պատգամաւորը՝ գրամը գանձելու համար:

Դճացէ՛ք սասցէք ձեզ ղրկողներին, որ հանգիստ թողնեն այս մարդուն, հակառակ դէպքում՝ ձեր անբող կենտրոնական կոմիտէն կհանցով պատասխանատու է իմ աչէ: Ասացէ՛ք, որ սպանանցողը Դիկօն է՞:

Դճար թէ կուսակցական նախանձանխնդրութիւնը—անձնազուճութեան բնազդը յանուն մի մեծ կազմակերպութեան պատի: Ա հմալքի—գճար թէ նա երբևիցէ աւելի ուժեղ արտայայտած լինի մի գազափարական անհատի մեջ: Ապառնացողը այնքան էր վճռական, խօսելու անը անպէ՛տ կտրուկ ու համազօր... Դիկօյի սովորական տանն էր այդ: Լողը ղգում էր, որ այդ մարդը պատրաստ է իրօք իր անձը գնել բարեւեղի վրայ յանուն այս կամ այն սկզբունքի: Նա սպանանցող և իրագործող էր: այդ լու գիտելին հակառակորդներն ու բարեկամները, և ի՛նչ սակը կուզէ, սպանանցող ղմարմինը՞՞ համակերպեց:

*

Ենչքան վեհութիւն կայ այն պատմական—թէկուղ և ախուր — վայրկեանի մէջ, երբ (1905-ի փետրուարին) Բաքւի փողոցներում, թաթարական գաղանաքան խոժանի դէմ նա մեն-մենակ սլացաւ հրացանը ձեռին, փողոցի-փողոց, կաուրե-կաուր, գաբանից-գաբան, թափօրելով ու ղնդակահարելով Այս, մեն-մենակ... Դաւաղիք ոտակիմանութիւնը ղլթայ էր կապել ամենուրեք և հասգին գճարութիւններով էր, որ ընկերների մի քանի խմբեր Բալխանիից ու Սև Բաղաքից եկան միացան իմբպանին: Երանց յարձակման թափը և գեանին փուս հարիւրաւոր թուրք դիակները վայրկեանաբար ղլմեցրին հակառակորդին և ստիպեցին նրան դիմել խաղաղութեան բանակցութիւններին...

Բաքուն խաղաղեց... մինչև մի նոր պրօպագանդան, և հասգին բաղաքի մէջ իմբպանի մինչ այն գրեթէ անյայտ անունը մեկն է մէկ շրջան առաւ և ամենքը

խոստովանեցին, որ Նիկոլը իր անձնական ու վճռական նախանձնութեամբ «փրկեց Բարուն»։ Առաջին անգամ էր կովկասեան գոտոյ թուրքութիւնը զրոյս խնարհեցնում մինչ այն արհամարհած հայութեան առջև...

*

Կօպենհագ երբ Նիկոլը «Ինտերնացիոնալի» ժամագրավայրում ճաշակ չունէր ընկերվարական խնդիրների համար. չէր զրազուժ նրանցով և շատ քիչ էր հետաքրքրուում Բայց բանի որ պատահաբար ժընեվ էր, ուղեց անսնել Միլազգային Համագումարը՝ 1910-ի օգոստոսին Կօպենհագ երբ Ինտերնացիոնալի ամենապաւորէր կնճարներից մեկն էր Հարիւր հազար ու-



Ն ի կ ո լ - Գ Ր Օ Շ Ե Ա Ս

ցիալիս գործաւորներ անցնում էին հակայական թափում Գանիայի մայրաքաղաքի փողոցներով և քիչ յետոյ սօցիալիզմի աշխարհահռչակ հետևորները ճառում են լայնածաւալ պարտեզի մէջ, այլ և այլ ամբիոններից, նոյն հօգի մարզութեան առջև Հայդուկայական լուս ու խորունկ յուզմունքով գիտում և իր աչքին ետրթ ու դիմական այդ սեփարանը, ծանօթանում և ծուռէր ու այլ սօցիալիս գործիչների հետ և ի վերջոյ, մի առանձին նիստի մէջ, ուր հաւաքած էին ս...ւական, լեհական, ֆինլանդական ու այլ մարզաթիւ պատգամաւորները, խոսք և աւնում իր կուսակցութեան անունից, և նոյն հակիրճ ու վճռական բռնեցով ծանուցանում և նրա գալոց թատերաւուրը.

«Մենք այսօր զիր ու ջան ենք, ընկերները մեծ մասամբ

փոխած, արատաւած են այս կամ այն պետութեան սահմաններում, բայց հենց որ ժամը կը հնչէ, մենք վերստին կը փողահարենք, կը թփրկահարենք — Գաշակցութեան լեզուով անմիջապէս կը հաւաքուի, կուս ու պարտաւս և կ'արշաւ թշնամու դեմ»...

Հին ուղղակի խօսքն ու դեմքը ընդհանուր հետաքրքրութիւն են յարուցանում, ամենքը սիրով ծանօթանում ու զրուցում են հետը, մի բանիւր խնդրում են պատմել իր ուղղական արիւնքները, ուրիշները առաջարկում են գրաւոր զեկուցում առ հայդուկային սակիայի մասին Հայաստանում...

*

Ժամը հնչեց... Հինուրոց կողմին նորին ահա տասանեց հարի գոս հարաններին, «Դաշնակցութեան» լեզուները տես յանկարծ լոյս ընկան գետնի սակից և կուս ու կազմ նեւուցին աւանդական թշնամու դեմ. Անգրանիկ, Գրո, Խեչո և ուրիշ նւիրական անուններ մի անգամ ևս հայդուկային ու անցան բերնէ բերան. բայց հենց այդ գոս, պատմական վայրկեանին լուց ընդմիջւոյ Կօպենհագի մարգարէի ձայնը, կարեց նրա բուռն, հարուստ, արկածալի կենսի թելը՝ Թանկագիին կենսի՝ որ դեռ այնքան պէտք էր մեզ իր սհագին փորձառութեամբ և իր ջնջ գաղափարային մարքութեամբ...

Նիկոլը Գուման... Անուններ կան, որ մի մի գրոշակ են «Դաշնակցութեան», հայ ժողովրդի ներկայ ու գալոց սերունդները պատկանաւորով կը խոնարհին նաև այս մեծ շիրմի առջև, որ կը զրոյս Քրիստոսափորների ու Անունների կողմին Հայկական ազատամարտի առաջին երկնաւանդներն են զրանք, յեղափոխական կազմակերպութեան անգրանիկ ու բազմերեստ սերունդը, Նրանց ձեռքով Հազարագրեց հայրենիքը բռնութեան ձիրտներից, բայց նրանց ձեռքով սրբեց ընդմիջւոյ հայի ճակոխ արկութեան ժանգն ու մուրը, նրանց առնական, գաղափարական ձիգերով սանդղագործեց Նոր Հայութիւնը, զատկէ նրանց, փո՛ւր նրանց:


Գ Ա Ր Օ Շ Ե Ա Ս

Բայդեղում վերջերս նահատակած Գալուստ Առյեսանը պատկանում էր մեր իսկական վեպերանների շարքին։ Յեղափոխական սակարկելին նա Նւիրեց գեռ 1883—1894 թուականներին։ Ամբողջ 30 տարի ուրեմ, նա սպրեց այդ կենսով։

Այդ երեք տասնեակ տարիների ընթացքում նա և պրոպագանդան էր, և կազմակերպող գրում էր թերթերում, վարում էր կազմակերպութեան ընթացիկ գոր-

եբրեւ Երբե՞ն նա Գարօհաստն էր, Երբե՞ն Կովկաս՝ Երբե՞ն Հիւսիսում, Երբե՞ն Փիւրքիտ: Աւելի անձնատուր էր լինում կազմակերպական ընդհանուր գործին յեղփփոտութեան նեղ օրերին, երբ հրապարակի վրայ շատ քիչերն էին ձեռն բացումից եղաւ նրա գործունեութիւնը մանաւանդ հայ-թաթարական կոնիւնկերի մուտք օրերին: Երևանեան նահանգը չի մտնումայ նրան Երբե՞ր՝

Իսոյ Գալուստի ընդհանուր գործունեութեան վրայ չէ, որ ուզում էր Եստրանուլ այսօր: Նա ուներ կազմակերպութեան մէջ և ուրիշ, իրեն յատուկ զինքը:— նա զին-ագ-ր-ծ-վ-ար-գ-ե-ա էր. գա էր նրա գործունեութեան հիմքը:



Գալուստ Ալոյնեան

Դեռ 80-ական թւականների սկզբին՝ մեր արդի գերածնութեան նախորդակին, մինչ երիտասարդութեան մի մասը աւարում էր գրասան աշխատանքով, մինչ միւսները կազմում էին խմբակներ՝ ժողովրդի համար գործիչներ կամ գործիչներին միջոցներ հայթայթելու նպատակով: մինչ աւելի հասունացանները, առաջնայի ցուպի առանձն հայտնաբերում էին զիմուս, Գալուստը, 2—3 օրիշ երիտասարդների հետ միասին, որոշեցին նւիրել այն ձեւին, որ յեղփփոտական գործունեութեան նորիցան կարեւոր լինի և կազմուս:

Դեռ 80 ամրի առաջ նրանք զգացին, որ մեր խեղճ իրականութեան մէջ մեր բոլոր ձգտումները կը խորտակուին, եթէ հայ ժողովուրդը դուրս չէրերէ իր նոցի մարտիկ ուժեր, և եթէ մարտիկներ չէրը:

չարեւին նորագոյն, կառարելագործւած զներեր: Եւ ոչ միայն զգացին, այլ և զիմացին գործնական քայլերի:

Միջնակարգ գարոցը թողած, երիտասարդները իրենց քայլերը ուղղեցին Հիւսիս Չինաստանին նրանք բարեւարներն, գնացին իրենց միջոցներով և յաղղեցան մանկ Յուլայի գրաստանի գինագործարանը, իբրև հասարակ բանւորներ:

Ննչպէս ասացինք, 3—4 հոգի էին նրանք: Գործի ամբողջութեան համար արդէն այդքանը բուսարար էր: Մեկը պիտի գտնուար մասնագետ առաւելագետ հրացանի փողի, միւսը փականի, մի ուրիշը պէտք է ընդհանուր Եստրանութիւններ ձեռք բերել զներերի բոլոր մասերի վերաբերեալ: Նրանք գտաւորուեցին այսպիսով գինագործարանի համապատասխան բաժանմունքներու: Գալուստը ընտրել էր փողի բաժանմունքը:

Չորս ամրի շարունակ աշխատեցին գործարանում 1888—1889 թ. արդէն պատրաստ էին և արտադրելի գործի համար: Հենց այդ ժամանակն էր, երբ հասունանում էր Կովկասում և այլ վայրերում սրւած առանձին առանձին խմբակների միանալու, գա շն ա կոց ել ու, մի մեծ կուսակցութիւն կազմելու միտքը: Մինչ այդ, երիտասարդ գինագործներին առաջին ձեռք մեկնողը եղաւ Գեանբարբաղի հայ ուսանողութիւնը և բիշ յետոյ Մուսիվայի ուսանողութիւնը, որը շատպէս ձեռնարկի օգտին մի խոշոր ներկայացում յաղղեցներ:

1890 թ. արդէն կազմուս էր Է. Յ. Գաշնակցութիւնը: Նրա առաջին քայլերից մեկը եղաւ գինագործարանի հաստատումը: Գժաբխաբար, գինագործներից մեկը՝ եթէ չենք սեռւում Միքայէլ անունով, բոլոր իր ընկերների կարծիքով՝ ամենակարեւորը, նա, որ խմբակի հոգին էր, չկար այլ ևս Չինագործարանից դուրս գալու ամրին զոհ էր գնացել հիւանդութեան: Միւսները կպան գործի, հրաւիրելով, իբրև օգնական, մի բուս վարպետ, որին մտերմացել էին Յուլայուս:

Առաջին աշխատանքը հիմնեց Քիֆլիսում Ալեքսանդրեան այգուց դէպի Պանքը ամառ զփողոցի անկիւնում: Բիշ յետոյ, երբ Գաշնակցութիւնից զատուց այսպէս կոչւած «Քիւրակցիան», վերջինիս նախաձեռնութեամբ երկրորդ աշխատանքը հաստատուց: Արագաւ աականում Արարիկաներից երկուսը՝ Ա. Բ.-ը և Ե. Բ.-ը այնպէս գնացին, չեաներն առնելով երիտասարդ փականագործ Բ.-ին: Քիֆլիսում ձայն Գալուստը, աշխատանք մասն երիտասարդ աշակերտների հետ միասին:

Քիֆլիսի աշխատանքը ստիպւած եղաւ գործել գաղտնի: Նա իր գոյութիւնը պահպանեց մինչև 1903 թ., երբ զիպուսի բերմամբ բացուց ասիկանութեան կոլովի և գրաստանի մեծացանակ հրացանների և մասերի հետ միասնել:

Արարիկանի աշխատանքը աւելի յարաւ և է

կանոնաւոր կեանք ունեցու չա գործում եր մինչև վերջին ապրիլները. որչ ժամանակ Գալուստն էլ եր աշխատում այնպեղ

Թերութիւններ կային, ի Տարկի: Ժամանակին գանգաւորներ, արտուժներ լուում էին վարդապետների շարքը: Մի երկուսը շուտով Տեառցան սուպարէղից, բայց նրանց սեղը ուրիշները բռնեցին և թէ որքան մեծ եր դրանց խաղացան գերը, այդ կարող են ըմբռնել նրանք, որոնք ժամկուց Տեսակել են կուսակցութեան զինական կեանքին:

Մի ամբողջ եթէ կարելի է այսպես սակ. զարոց եր Տիմուսեր Աշտիկները, վարժուելով ուսալին վարդապետների ձեռքի սակ, թանկագին ոճանգակներ էին Տանգիսանուս: Թէ կողմաւում և թէ Աարդասականում,

եկելի, կեղծ, փնացան բերդաններով, որոնք վասնգաւոր էին ամենից աւաղ գործածողի Տամար Անկարելի եր Տանգիսա խղճով դնել նրանց կուսակցների ձեռքը, կամ ժարգկային զոՏեր աւաղ՝ փոխադրել երկիր: ԱրՏեսուանոցից դուրս եկանները շինուած էին խումբով, բոլորն էլ փորձի ենթարկուած: Գալուստը ինքը ներկայ եր լինում փորձերին՝ անձամբ քանթութանալու Տամար իւրաքանչիւր Տրոցանի ամենափոքր թերութիւններին:

Գալուստի, ինչպես նաև միւս ընկերների կարևորութիւնը ոչ միայն նրա մէջն էր, որ վարդապետ էին Ոչ նաւաղ դեր էին խաղում այն կապերը, որ Տասասակ էին նրանք Յուլայում զինագործարանի այլ և այլ բանձանուքների կառավարիչների Տեսա Արանց շնորհիւ:

Արտիստ



Խ Ա Ն Ա Ս Օ Ր Ի Ա Ր Շ Ա Ի Ա Խ Մ Բ Ի Ծ

պահանջի Տամեմուս այս կամ այն կետերում Տասասակում էին ճիւղեր:

Եթէ Գաշնակցութիւնը աչքի ընկու միւս Տայ և ոչ-Տայ կուսակցութիւնների շարքում, իբրև աղմուքներ լուս պատրաստած մի կուսակցութիւն, գրա Տիմուսկան պատճառներից մեկը պետք է փնտաել նրա սեխնիրական պատրաստութիւնների մէջ, որին զիմել եր նա էր գոյութեան առաջին օրից:

Թիֆլիսի արՏեսանոցն էր, որ աւաղին անգամ Տայնայթեց Գաշնակցութեանը առաջին կանոնաւոր բերդան Տրոցանները: Ասանց գրան՝ կազմակերպութիւնը ստիպուած պիտի լիներ գոՏանալ գաղտնի զինավաճառների ձեռքով սարածուաղ մեծ մասամբ կապու-

Տնարուարութիւն եր սեպտեմբէլ ձեռք բերել պատրաստի մասեր՝ փող, փակնս կայն և արՏեսամանցում նրանցից ոՏուարել,՝ կաղմէլ ամրողչական Տրոցաններ: Նայն կապերի շնորհիւ եր գարնաւ, որ յարդում եր դուրս Տանել բոլորովին պատրաստի զէնքեր, նոյնքան մարուր, ըմպիւր, որքան պետականները:

Ընկերներից շուտ քչերը գիտն թերևս, որ մեր նշանուար ժամները՝ այդ գերազանցագիտ գաշնակցական Տրոցանները մուտք գործեցին մեր մէջ Գալուստի ջանքերով 1892 թ. էր: Յուլայից գալով՝ նա բերել էր Տեսը Թիֆլիս 2 Տասա Պասուսում եր Տրոցաններով նոր Տրոցանի առուելութիւնների մասին. ընկերները գժաութեամբ էին Տասասուս—Գալուստը Տամարում եր

մեր շրջանում որևէորպէս, չափազանցնող: Ծարան բազմաբն զուրս փորձի՛ և ընկերները չհաւատացին իրենց աչքին: Մէկը ընեայ եր Յունայի համար, միւսը ուղարկւեց Պարսկաստան: Այս երկրորդը 93 թ. Գերիկի նշանաւոր կուսում Վարդանի ձեռքին էր գործուծ:

Ոչ որ այնքան պահպանողական չէ զենքի վերաբերեալ: որքան մարտիկը, բայց Գերիկի կուսից յետոյ մեր հայրուհները աչքից սկսեցին ձգել իրենց սիրտն բերդանները և մտին փնտռել:

Հետեւեալ տարին արդեն 800 մասինների մասեր գնւած և բերւած էին Թիֆլիս:

Մտփնները միանգամայն բարձրացրին մեր մարտական խմբերը, Թէ 1895—1896 թ. ինքնապաշտպանութեան կռիւներում, թէ Խանասորի յայտնի որշումների մէջ, թէ յետագայ բալլը ընդհարումների մէջ, վճռական դերը կատարում էին մտփնները:

Չպէտք է մոռանալ, որ այդ ժամանակները ոչ միայն բրդերի, այլ և թիւրք կանանաւոր զորքի ձեռքին չկային մտփնի նման արագամիտ և հեռանկից հրացանների՝ անծուխ վռուցողի:

Ինքը՝ ուսուկան բանակը սկսեց զինուել մտփններով միայն 96 թ.:-ին, այսինքն Գաշնակցութիւնից չարս տարի յետոյ: Զարմանալի չէ, որ երբ ուսու պաշտանանների ձեռքն էր ընկնում մտփնը, հաւատացած պատմում էին, թէ հայերը զինւած են ան ք ի լ ա կ ա ն հ Ր ա ց ա ն ն Ն Ե Ր Ո Վ:

Գաշնակցութեան հայտնանքի տարին՝ 1908 թ.ահանին, ուսու ստաիկանութիւնը մտնում է և Գարուստի ստուը Երևանուծ Գալուստը բայրկայ և լինում, եղելութեանը կատարելագոյն անսեղեակ, երբ նա սուն է վերագոռնում, գրոն մօա նրա առաջը կարում է սուսիկանը և նրան ստարի սեղ ընդունելով՝ թող չի սալիս ներս մանկը: Գալուստը օգուում է ոստիկանի միամտութիւնից, երեսը դարձնում է, գնում է ուրիշ սեղ պահուում է ոպա ապաստանում Գորսկաստան:

Ճիշտ պորսկական սահմանադրական կռիւների ստը շրջանն էր: Հայերը ցոյց էին առին սանաւորով մասնակցութիւնս Գալուստը անհրաժեշտ էր, և նա սկսեց գործել այդպեղ:

Թաւրիզի կուսից յետոյ, պարսիկ յեղափոխականների ու ուսու զորքերի միջև, միւս մեր ընկերների նման Գալուստն էլ անցաւ Թիւրքիս: Այնտեղ էլ նա շարունակ զենքի վերաբերեալ գործերով էր զբաղւած:

Գալուստը բնաորութեամբ չափազանց մեղմ էր, բարի՝ Ողևորող էր, և ինչպէս բիշ վերը նկատեցինք, երբեմն չափազանցնող ու իր չափազանցութիւններին անկեղծ հաւատացող: Ընկերասեր էր շատ, լի զգացմունքով: Նրան է պատկանում յարգիւտ սեղաց տանասորի գաշտուոր՝ յայտնի երգը:

Չնայած որ 50 տարին անցել էր, նա պահել էր զեռ իր մէջ շատ մանկական գծեր:

Ինչպէս արդէն գիտեն ընթերցողները, նա սպանւեց Ռայազեղում, անյայտ չարագործների ձեռքով, այն օրը, երբ պատրաստուում էր կովկաս անցնել:

Այսպէս ընկաւ մէկը մեր այն հին ընկերներից, որոնք սասնակ մտփնների ընթացքում հոգեկան օյժ են ունեցել: Կարելու կազմակերպական կենսերով մէկը նրանցից, որոնք չեն մտել արդեն հարթւած Խանսպարհի մէջ, այլ իրենք են պատրաստել և հարթել որոշ հոսանք, մէկը նրանցից, որոնք գաշնակցական էին նախ բան Գաշնակցութիւնը:

Պ Ա Տ Ե Ր Ա Ջ Մ Ը

Գերմանիայի, ուելի Ճիշտ, պրուսական կիսաֆեոզալ բուսպետութեան վրայ է ծանրանում պատասխանատւութիւնը այն անօրինակ կատասարօֆի, որ պայթեց քաղաքակիրթ մարդկութեան վրայ և որ ահա հինգ ամսից ի վեր Խարակոյն է մեր շուրջը, կլանելով միլիոնաւոր երիտասարդ ուժեր, ուերելով անսեռութիւն ու մշակոյթ, կործանելով արևստի բազմադարեայ կրթողներ և ողբի ու յուսահատութեան բառալը տարածելով վիթխարի, պատմութեան մէջ չսանսւած, մարդկային սպանդանոցում:

Եթէ կար այդ մասին տարակոյսի մի սուտեր, այն էլ այժմ չբացաւ իտալական պարլամենտի անահնկալ մերկացումով: Աստարիան, անկարող ու անձարակ Ռերիտայի կառավարութիւնը, վաղուց էր որոշել զարնելու Սերբիային, և սերբիական գիւղերի վրայից արշաւելու զէպի Սալոնիկո նա գիտէր, որ այդ բայլը պիտի յարուցաներ համաեւրոպական պատերազմ, բանի որ Ռուսաստանը չպիտի թող սար բաշկանեան սլավոնութեան յօշոտումը պանդեբմանիլով ձեռքով:.. Նա գիտեր այդ— և 1913-ի օգոստոսին, երբ պատրաստուում էր շքիայազերծել ֆոթօրիլը, յարձակւելով Սերբիայի վրայ, հարկ էր սեղում գիմուռն անել իր գաշնակից Խառիային՝ իմանալու նրա բունելիք զիրը գալոց ընդհանուր վերիվարումի մեր:

Աստարիան, Հարբուրգեան զուտմեալ ու խարիւռվ միպետութիւնը, ներքուստ հիւանդ, անսամայրի՝ ազգերի աննարուուն հակամարտութեամբ, Աստարիան, որի սզգարնականութեան մեծամասնութիւնը գերմանաստաց սլավոններն են — չէր կարող, հարկաւ, այդքան ինչպիսի քրեգիտներ որոճող, եթէ չունենար թէ և թիկունք յանձին իր հզօր գաշնակից—Գ Ե Ր Մ Ն Ի Մ Ե Ն Ի իրօք այնտեղ, Գերմանիայում էր, որ յղացում էր մեծ

Հարածը: Այնպէս, Բերլինում էր, Վլէշելմի, Թագա-
 ժառանգի, Մոլոկեան գոռոզ սպայակոյտի, պրուսական
 բիրտ, աւարտանը Ֆեդոզիլովի միտավայրու՞ն էր, որ
 սարինբրից ի վեր ծրագրում էին յեղաշրջել Եւրոպայի,
 աշխարհի բարեկեղծ, խել ֆրանսիայից նրա լուսազոյն
 գաղութները, խելն Անգլիայից նրա ծոպային համաշ-
 խարհային տիրապետութիւնը, հարուստ Աուստրալիան,
 յափառակել լեհաստանն ու Բերն-Քալանան նահանգ-
 ները, դառնալ գերագոյն Իրաւարար ստորդ երկրա-
 գոյնի վրայ, ենթարկել աշխարհը գերմանական հեղե-
 յանիային ..

Նապոլեոնեան աշխարհակալութեան այդ սխեմատիկ
 ծրագիրը այսօր արգէն ծանուցում է վրդովեցուցիչ
 ցնիկովով գերման մտքի ամենափայլուն ներկայացուցիչ-
 ների, Հելկեներերի ու Օսլովչների բերնով... Պերմանիան
 ամենահզօր, ամենաառաջգեմ պետութիւնն է, գեր-
 մանացիք ամենախելքը, ամենահանձարեղ, ամենապիտե-
 սասեր և ամենամարդասէր ցեղն են, ամենարբօք
 իրենց արևեստով ու ձորարարւեստով, ամենահզօրը
 իրենց գիտութեամբ ու փիլիսոփայութեամբ, իրենց
 զինուորական ու բազարական կազմակերպութեամբ—
 հետևապէս... նրանք պէտք է իշխեն մարգկութեան
 վրայ, պէտք է խելն առաջնութեան արևունքին տիե-
 ղերքն արցանն կրկնում, պէտք է թելարքին իրենց
 օրէնքը բոլոր ազգերին... Այդպէս է մասնում անկեղ-
 ծօրէն գրեթէ ամեն մի գերմանացի, այդ ոգով, այդ
 ուղղութեամբ են կրթել: դաստիարակել սերունդները
 1870-ի յաղթական պատերազմից ի վեր, շնորհի այն
 յատուկ դաստիարակչական մեթօդի, որ մտքել է պրուս-
 սական սարամեթ ընդհարանիքը ամենուրեք, գպրոց-
 ներում ու հանրային այլևայլ հաստատութիւնների մէջ..

Կառավարութիւնն է ժողովուրդ—գրեթէ բացարձակ-
 կապէս համընդուն և ժողովուրդի մէջ ամենքն էլ
 մինչև ուղ ու եռւծ սողորւած են իրենց ազգային
 գերազանցութեան այդ հաւատամքով և գուցէ չէր
 սխալում ծերունի Վայենաը, երբ նա ֆրանսիայի սո-
 ջնախառնական օրգանի մէջ ազգայնորում էր—խախտե-
 լով ընկերպարութեան ամենախոր աւանդութիւններից
 մինը — թէ ղմայելքն ու իր ժողովուրդը արժանի են
 միմեանց...

Այո, կոյր, սարամեթ չօվինդի սանդը համակել է
 ամբողջ գերմանիան, ոչ միայն Վունաի ու Հաուպանի,
 գրոցներն ու պրոֆեսորների Գերմանիան, որ իր սնար-
 ժանութեան լիպատար սպայոյքը ունեց բիէ առաջ
 հրատարակած մանիֆեստով (մի մանիֆեստ՝ որ ար-
 արացնում էր Բելգիայի չեղարութեան խախտումը,
 պատերազմի պատճառ էր հաշմանկ Դուստտանն ու
 Ֆրանսիան և իունկ էր ծխում գերմանական միլիտա-
 րիզմի) — չօվինդի սանդը համակել է և Սօցիալ-
 գեմօկրատիստի լայնածաւալ շարքերն ևս Թո՛ղ

էր, ողորմելի էր նրա ղրոցը՝ պատմութեան մեծա-
 գոյն ունի դեմ, որ հեղինակում էր պաշտօնական Գեր-
 մանիան. գեղո՞յն ու երկնա մայ Vorwärts-ի զիբը
 սկզբից ի վեր, Գերմանիայի ամենահզօր կուսակցու-
 թիւնը, որ երեք միլիոն ընտրողներ ունի և 111 պատ-
 գամուրներ Ռայխստագի մէջ, ասե՛ս մեկէն ի մէկ ընդեց
 իր գաղափարական, սօցիալիստական կերպարանքը, նա
 ոչ միայն քուէարկեց պատերազմական բիւլէն, ոչ միայն
 մասնակցեց խնդրագրա ղուսում՝ ներքն ու յոյցերին
 ի պատիւ Թագաւորի, այլ և մի խոսք չգրաւ խորանելու
 բարբարոս արշաւաճը փոքրիկ Բելգիայի դեմ և...
 Ի լրու՞ն ամենայնի, զրկեց պատւիրակութիւն Իտալիա՝
 համոզելու այնտեղի սօցիալիստներին, որ Գերմանիայի
 դաժը արդարագոյնն է և որ հարկ է օժանդակել
 նրան...

Մենք միշտ էլ Թերմահաւա ենք եղել այդ աճագին
 կուսակցութեան ներքին յեղափոխական կողմի մտքին,
 այժմ դէպքերը բալիս են կատարելապէս հիտաթափե-
 ցնելու և լուսասանքերին, գերմանական սօցիալ-դեմո-
 կրատիայի ամենաքեմ երկրագուններին, որպիսիք են
 Ժիլ Գեդի, Պլեխանով և բազմաթիւ ուրիշներ: Ո՛ր ես
 ծօռեւ... Ամստերդամի Համաժողովի ամբօնից —
 1904-ին — նա գրեթէ մենմիտել էր, որ մաըն-
 շում էր քարացած զօրութիւններին աւանդական
 կուսութեան դեմ, բողոքում էր յուսահատ՝ մարքսիս-
 տական գոռոզ քուրմերի դեմ, որ յանձին Բեքելի ու
 Ժիլ Գեդի հեղեմում էին ու ջրախախում ուղիղիցնից՞ն
 ու ղժօռեւտան սպարտիստիզմը՝, անմեծայի ենթար-
 կում ամենամեծ և ամենազգաստ Սօցիալիստին, հաշա-
 կելով ղուղղագրական՝ սօցիալ-դեմօկրատիզմի ամրակուս
 զիսցիպլինը, նրա փրկարար սաքսիզը, յեղափոխական
 պարունակութիւնը, արմատական սգին... Ե՛տղը էր...
 Եւ այսօր աճա համաշխարհային սօցիալիզմի երախա-
 սար վեաներնը, ծերունի Վայեան, ողբում է ցաւազին
 պատանքը, ողբում է այդ աճագին կազմակերպուեան
 սնանկութիւնը և միևնոյն անարգական սախաւկի վրայ
 դնում Վլէշելմ կայսրին ու աւգալական լեգեօններին...
 Ծօռեւ, Վայեան և Ֆրանսիական սօցիալիզմի յեղափո-
 խական թիւը Ինտերնացիօնալ վերջին կնգրեւնեւում—
 հաուպարտ, Կոպենհագ — յորդորում էին, գրեթէ
 աղբրում գերմանական սօցիալ-դեմօկրատիային՝ փոքր
 ինչ որչ ու համարձակ, փոքր ինչ արի ու կորովի զիբը
 բունը միլիտարիզմի ու պատերազմի խնդիրներում: Ծօ-
 ռեւ և իր համախոհները աման անգամ առաջադրում
 էին պարզ ու կարուկ բանաձևեր, հրուսիրում էին ան-
 նաորմատական միջոցներով ընտանանոյ համաերոպա-
 կան ամենակուլ միլիտարիզմի դեմ, գործադուլով ու
 զինադուլով արգելք լինել զինուորական կասսաների
 ազմային աննշանքներին և... ամեն անգամ նրանց այդ
 յստակ օրշուձները վիժում էին, զարնելով գերմանա-

կան Սօցիալ-դեմոկրատիայի *rela-*ն, նրա երկնոս, հու-
կոյեղագոհական չկամութեան

Գանձեցան, անշուշտ, մի տասնեակ անհասներ այդ
վիթխարի կազմակերպութեան ետեւում— Կարլ Լիբկ-
նեխտ, Կարտ Յեռակին, Ռոզա Լիբքեմբուրգ և այլն—
որոնք բողոքեցին կուսակցութեան այդ հըռ. և ան-
պատիւ համակերպութեան դէմ, յիշեցնելով ընկերա-
բարեաց հաւատարմը և հասկացնելով Գերմանիայի շար-
ժանքը դէր համակերպական աղետի շղթայազերծման
մէջ Կարլ Լիբկնեխտ — պատիւ մեծ հօր արժանաւոր
գաւակին—մեն մենակ Ռայխստագի վերջին նիստում
ձեռնպահ ձայն պատերազմական նոր ծախքերի բւտար-
կութեան միջոցին, միակ խիզախը, 110 սօցիալ-դեմո-
կրատներէց, որոնք անձեռնաբաժ հպատակութեան ցոյցեր
էին անում Կալքերի հանդէպ... Լիբկնեխտների օրինակը,
սակայն, շատ շնչին սփոփանք է, նա մի կաթիլ է ու-
կիանի մէջ:

* * *

Եւ չարաշար էր պատժի աշխարհագրորդ ոճրի հե-
ղինակը: Արդէն իսկ Գերմանիան կորցրց իր գաղա-
թային գոհանքերը, որոնցով հպարտ էր և որոնց վրայ
ծախան էր անհաշիւ գրամագլուխ կորցրցն նաև մի
շարք նուէր — լուսագոյններից — կորցրցն իր ամբողջ
սուէրական նուստարմը: Չենք հաշուում պատերազմի
վրայ ծախսւած միլիարդները և մանաւանդ մարդկային
անբաւ զոհերը: Ի՛նչ շահեց: Բանակը կազմակերպւած
պոլուսական դաժան սխաւեով, 45 տարուց ի վեր կա-
տարեկործանել էր յատուկ նպատակով, նա կուշած էր
իրագործելու սրբաշու, գահազեծ, շունթահարոց և ս-
խա յարձակներ (offensive), դեպի աջ և դեպի
ձախ: Մի բանի շարժւայ մէջ նա պիտի հեղեղէր Քրան-
սիան, պէտք է գրուէր Պարիզը, թելադրէր իր պայ-
մանները և ապա դառնար շախմատի թափով դեպի
Ռուսաստանը:

Յուստարարութիւնը կատարեալ եղաւ: Էինգ ամուսայ
պատերազմից յետոյ գերմանական զորքը ոչ միայն
Պարիզ չէր հասել, այլ և ստիպուած է բայլ առ
բայլ յետ նահանջը: Վերջապէս, Կալքեր չէ էլ կորոզ
խաղաղութեան անջառ բանակցութիւններ սկսել Քրան-
սիայի հետ, նա գործ ունի այսուհետև մի հջօր, ան-
պարտելի բլօկի հետ — Անգլիո, Քրանսիա, Ռուսաս-
տան—որոնք յայտարարել են անխելի դաշնակցութիւն
վերջնական յաղթութեան համար՝ գերման բանակը
պէտք է երթալ մինչև Պարիզ, մինչև Լանդօն, մինչև
Ռուսաստանի սիրտը: Ըստ հետու է նա այդ երեք
կէսերից և երբէք էլ չի հասնի: որովհետև նրա զին-
ւորական և տնտեսական ուժերն էլ անսպաս չեն... Իսկ
դաշնակիցները — Աւստրո-Ռուգարիան և Ե թիւրքիան...

երկուսն էլ խորիւր, անյոյս գոյութիւններ: մինը ար-
դէն անօթահար յետ և նահանջում սերբերի առջև—
մինչև ուսները կանգնած են Կրակովի հանդէպ — իսկ
միւսը շուտով կուշ կ'երթայ ուսական Նորսիւն: Չփրկեց
Կալքերին և „ՋՏՏԹԻ“, սրբազան պատերազմի մար-
տարը, որ Պոլսի իր ձեռնածուները միջոցով նետել էր
մահմդական աշխարհի մէջ: շիրագործեցին և իր միւս
միտմիտ յոյսերը—սեննէլ յեղափոխական փոթորիկներ
Քրանսիայում, Անգլիայում, Ռուսաստանում... Երեք պե-
տութիւնների մէջ էր, պատերազմը յայտարարելուն
պէս, չքացան վայրկենաբար ներքին պատակաւձեռնը,
վերացան առժամայէտ Ռյստերեան տագնապը անգ-
լիայում, հաշուեցին ամենահաւանաբար կուսակցութիւն-
ները Քրանսիայում — անգամ Թուէսի թարմ դիակի
շուրջը— իսկ ուսական յեղափոխականները չեն հա-
մաձայնիւ և յ մ ժ իսկ բորբոքել յեղափոխական նոր
հրդեհ, լաւ գիտակցելով թէ ինչ ահաւոր վտանգ է
գերման-յաղթական միլիտարիզմը համակերպական
խաղաղութեան, գեծօրբոտիզմի ու սօցիալիզմի համար,
լաւ բնականով, որ — իրերի մի սարսափալման, պարտ-
գօքսային զուգորդութեամբ — անգամ Ռուսաստանը
կուշած է, իրեւ դաշնակից արևմտեան ուսակալար
պետութիւնների, անուղղակիորէն պայքարելու յանուն
երապական զեծօրբոտիզմի... Չարաշար վերպեց Բեթ-
ման: Լայվէգեան ձախողակ դիւանագիտութիւնը և ան-
գամ տասնեակ տարիների դաշնակից-Իտալիան չէզո-
քութիւն յայտարարեց, երես դարձնելով գերման-
ուսարիական հրամանատարներից, որոնք նիթել էին
եղեծնագործ գաւազարութիւնը համաշխարհային խաղա-
ղութեան դէմ՝ առանց Լուովի հետ խորհրդակցութեան
փորձ իսկ անելու: Իտալիայի կայսր իր երկու դաշնա-
կիցների հետ զուս զուս պաշտպան զօրակ ան իմաստ
միայն ունէր, իսկ դաշնակիցները ոչ թէ պաշտպանու-
թեան հարկի տակ էին, այլ իրենք էին նախադրանկեր:
Եւ ահա որ աւուր ամբողջ Ապենինեան թերակղզու
վրայ առում է ժողովրդական շարժումը, որ պատերազմ
է պահանջում Գերման-Աւստրիայի դէմ, մի պատերազմ,
որ պիտի լրացնէ նախախիտ ազգային միութեան գործը,
վերանաձեղով Տրիեստն ու Տրիեստը: Վերջապէս, ահա
սպասուական դրամներ են լուում ամբարտաւան սուստե-
ների սկանչին նաև Բալկանեան երկիրներից...

Օդը ցնդեցին այգիսով բուր պատարանքները և
այսօր գերման ցեղը գաւառերէն բոււում է իր վարել-
ների յանցանքը: նա խապաւ կղղկացած է ամբողջ երկ-
րագնդէ վրայ, նրան ամեն սեղ տաում ու հաշուում
են, նրաններ ամենքը գարուէն են, որպէս նոր սիպի
բարբարոսներից, որոնք իրենց ցեղական, կատարային
շահերը տառջ մղելու համար, պարտաւոր են արտան
մէջ խեղդեցու ամբողջ մարդկութիւնն ու բաղաբազր-
թութիւնը: Միակ բարեկամը—Թիւրքերն են...

Իս բարոյական կորուստն սուսաբար
 սուսաբար է, շատ աւելի ծանր, քան նիւթականը: Բայց մի օր կը գայ, երբ յանցադորձ իր քաւութեան
 վերջին բաժակը կը քամէ, երբ յաղթական գաշակից-
 ների բանակը կը կանգնի Բերլինի արբայական պալատի
 առջև և կը թելագործ Հոնքնցլեյնիան արքայատոհմին
 ամբողջ սպառնալուքը քաղաքակիրթ մարդութեան կամը:
 Ո՞վ գիտէ... գուցէ գերմանական ժողովուրդն ևս —
 սեշտութեանն ու գեղեցկութեանն արհամարհանող այդ
 անուր բուրմը — կը թափարկէ վերջապէս նոյն գերագոյն
 ազնուայի ժամին, գուրս կը բշտէ մէջաբան բնաւոր-
 ներին, կը խորատկէ ռազմասանց աւատականութեան
 միջոտերգը և կը յայտարարէ Տանրայեանութիւն: . .
 Այն ժամանակ — միայն այն ժամանակ — կը դբի Տաս-
 աստուռ խարխիւ միջազգային խաղաղութեան Տամար:

ՀԱՅՈՒԹԻՒՆ ԲՈՒՍ-ՑԱԿԱԿԱՆ

ՊԱՏԵՐԱՍՈՒ ՀԱՆՂԷՊ

Պատերազմի թատրը կ'ընդարձակի Հեռահեռ, աղէտը կ'առնէ շուտով իր կարմիր ծիփանքերի մէջ
 շեղքը կըսէ պետութիւնները, Իսպիա, Ռուսիա, Բուլ-
 Գարիա, Յունաստան, որոնցից իւրաքանչիւրը իր
 յաղգային սրբազնագոյն սենչերն՝ ունի, իր կորցրած
 Տողերի դառը, իր շատ որոշ պահանջները հանդէպ
 Թուրքիոյ, Աւստրիայի կամ ուրիշ պետութիւններին Ե՛րբ
 կը վերջնայ արիւնալի Քասը... Պատերազմի սկզբում
 այնքան դիւրին էր պատասխանը... Քաղաքագետներ ու
 ռազմագետներ միմայն յայտարարում էին, որ մեկ
 երկու ամիս աւելի չի տևի ազգերի իրարանջումը, որ
 ռազմական գործիքների անօրինակ կատարեալագործումը՝
 միացած անսեսական Տնարաւոր սազնագներին, շուտ
 վերջ կը տան կոտորածին: Հինգ ամիս անցաւ արդեն —
 և գեռ անՏնարին է նախատեսնել վախճանը. ո՞վեկ
 աքի՞, յերկու տարի՞, յշատ տարիներ... Այսպէս են
 այժմ արգարարում նոյն ձեռնհաս քաղաքագետները:
 Բայց և ամենքի մէջ այն ստիպիչ գիտակցութիւնը կայ,
 որ սա վերջին պատերազմն է, վերջին սպառնալուք Տըր-
 գէՏը, որ պիտի լափէ, ոչնչացնէ եւրոպական ու ասիա-
 կան Տորգոնների մէջ բոլոր հինցած ու ոճրանիւթ
 գոյութիւնները, բոլոր գիշարիչ միջնագործան պարս-
 զիտները և պիտի հարթէ միանգամ ընդմիշտ մարգիւ-
 թեան խաղաղ ու քանախն զարգացման ուղին:

Թիւրքեան էլ նեուեց յորձանքի մէջ: Ջգաց, ան-
 շուշտ — կամ գէթ իրեն զգայ աւին գերմանացի ինտ-
 մակները — որ հասէ և վճռական ու ճակատագրական
 վայրկեանը նաև ամանեան կայրութեան Տամար, յեթէ
 յաղթեմ ռուս - ֆրանս - անգլիական գաշակցութիւնը,

Թիւրքեան, միևնոյն է, պիտի կործանուի, պիտի բաժնուի
 երեք յաղթական պետութիւնների միջև: Իսկ եթէ յաղթե
 գերմանաւարական զինակցութիւնը, Յաճկաստանը
 կարող է յետ ստանալ իր կորցրած Տողերի մի մասը
 Բալկաններում, գուցէ նաև Եգիպտոսում ու Կովկասում,
 պարզ հաշիւը, ուրիշ, թեկազում է Եթիօպիայի կա-
 ռապտութեանը՝ մանկ անյապաղ կրկնէ մէջ, թե թեկի
 գերմանաւարական գաշակցութեան Տեան: Այսպէս
 պատճառաբանեց գերմանական հիպոթիզի սակ գեգերող
 Եմկեր փաշայի կուսակցութիւնը: Եւ ո՛հա այսր տաճիկ
 զորքերը սլանում են մի կողմից դեպի Կովկաս, միւս
 կողմից դեպի Եգիպտոս: Ռուսական բանակը մտու
 թիւրքաց Հայաստան, վարեց մի շարք յաղթական կռի-
 ւներ, զարնեց կիսմայական խոչընդոտներին, գանդա-
 ղեցրեց իր ընթացքը, տեղ-տեղ կանգ առաւ, բայց
 յամաօրեն պիտի շարունակէ մինչև Երզրում, Հայաս-
 տանի միջնագրերը, ուր Թիւրքեան կենսանայրեղ է
 պատկանելի զօրք և սահղեղ է խոչը ամրութիւններ
 գերման սպանների զեկազարութեամբ:

Երբ կը Տաստաւորն ուսները Երզրում, մինչև ո՛ր
 կը հասնի ռուսական առաջխաղացութիւնը Հայաստանի
 մէջ, ի՞նչ են Պետերբուրգի ծրագիրները այդ երկրի
 նկատմամբ — ո՛հա խնդիրներ, որ մի մի Տրտասայ առեղծ-
 ւածներ են գաւռնում այսօր հայութեան Տամար: Ռուս
 լիբերալ մտածելի մէջ լուեցին ձայներ ի նպաստ հայա-
 կան աւանմոխյի, բայց, անտարակոյս, այլ է որոշ
 շրջանների արամազութիւնը: Յոր յմանիֆեսաբ՝ կար-
 գացեց փոխաբայի կողմից Թիֆլիսի հայ երևելիներին,
 բայց այդ մեծախոսում յայտարարութիւնների արժեքն
 ևս չեղք չափաբացնելի: Սակ մանիֆեստներն առատորեն
 շուրջեցին պատերազմի սկզբում: Ռուսականներն այլ
 ազգութիւններին: Նրանք գրում են ժողովուրդը Տամար

Այդ սեսակ յայտարարութիւնների ու խոստանքների
 առիթով չէ, որ մեք պետք է ծափ զարկենք խանգա-
 վառութեամբ ու ցնծութեամբ. պատմական սխուր
 նախընթացները մեր առջև են: 1826-ին ռուս-պարս-
 կական պատերազմի մէջ հայ ժողովուրդը, իր հազար
 առաջնորդ գլուխ ունենալով, ոտքի ելաւ զանգաւածօրեն
 և մեծապէս արջցեց երկու Տայրական խանութիւնների
 նաճումին, որոնք Տամար յուսացում էր գէթ սա-
 մանափակ ինքնօրինութիւն, ավանտուրա յ գերեւ ելան,
 սակայն, յոյսերը, Պատկեմիչի գծաբակ սեփմի մակ, և
 յուսախաբ Աշարակեցին նոյն սեփմի գէմ բողբոջով
 արքունից Բեսարաբիա Երկու տարի յետոյ ռուսական
